



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 870-Ա/Ք

19 սեպտեմբերի 2012 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 18-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ N 717-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության բիզնես գործընթացների կանոնակարգման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N850-Ա որոշման հավելվածի 15-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիտորինգի կարգը հաստատելու մասին» N 717-Ա/Ք հրամանը:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մոնիտորինգի կարգը»՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային ծրագրերի և պայմանագրային (թեմատիկ) նախագծերի (այսուհետ՝ Ծրագրեր) մոնիթորինգի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրերի մոնիթորինգի նպատակն է դրանց կատարման ընթացքում ձեռքբերված նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության ստուգումը առաջադրանքներով նախատեսվածների հետ, ինչպես նաև ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության գնահատումը:

3. Ծրագրերի մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4. Ծրագրերի մոնիթորինգը բաղկացած է հետևյալ փուլերից՝

1) կատարման ընթացքի, կատարողների, ձեռքբերված գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում.

2) հավաքագրված տվյալների վերլուծություն.

3) հավաքագրված տվյալների և դրանց վերլուծության արդյունքների միասնական շտեմարանի (այսուհետ՝ Շտեմարան) վարում.

4) հավաքագրված տվյալների և դրանց վերլուծության հիման վրա մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի (այսուհետ՝ Տեղեկանք) կազմում.

5) բացահայտված խնդիրների կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների և ցուցումների մշակում ու Ծրագրերի ղեկավարներին տրամադրում:

5. Ծրագրերի մոնիթորինգի ընթացքում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Կոմիտե ներկայացված փաստաթղթերը, ծրագրերի իրականացման ընթացքը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Ծրագրերի ղեկավարներից կարող են պահանջվել Ծրագրերի կատարման պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր և նյութեր:

6. Ծրագրերի մոնիթորինգն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ ոչ շուտ, քան կատարման սկզբից երեք ամիս հետո և ոչ ուշ, քան կատարման ավարտից երեք ամիս առաջ:

7. Սույն կարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով Կոմիտեի նախագահի հրամանով ստեղծվում է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Խումբ), որի կազմում ընդգրկվում է Կոմիտեի գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող երեք աշխատակից, ինչպես նաև գիտության տվյալ բնագավառում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ: Գիտական և գիտատեխնիկական գործունեության միևնույն բնագավառի Ծրագրերի մոնիթորինգի համար տվյալների հավաքագրման և վերլուծության նպատակով ձևավորվում է մեկ Խումբ:

8. Խումբը ստեղծվում է ոչ ուշ, քան Ծրագրերի մոնիթորինգի սկզբից յոթ օր առաջ: Մոնիթորինգի մասին Ծրագրերի ղեկավարները տեղեկացվում են ոչ ուշ, քան մոնիթորինգի սկզբից երեք օր առաջ:

9. Ծրագրերի մոնիթորինգի համար տվյալների հավաքագրման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում Խմբի ղեկավարը Կոմիտեի աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում հավաքագրված տվյալներն ու դրանց վերլուծության արդյունքները:

10. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը Ծրագրերի մոնիթորինգի համար հավաքագրված տվյալներն ու դրանց վերլուծության արդյունքները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում դրանք տրամադրում է Կոմիտեի աշխատակազմի՝

ա. գիտական քաղաքականության վարչության պետին՝ Շտեմարանի վարման աշխատանքները կազմակերպելու նպատակով: Շտեմարանը պարունակում է տեղեկություններ Ծրագրերի հայտերի, առաջադրանք(ներ)ի, պայմանագրերի,

կատարման ընթացքում Կոմիտե ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև Ծրագրերին առնչվող այլ նյութերի վերաբերյալ: Շտեմարանը վարելու աշխատանքներն իրականացվում են Կոմիտեի աշխատակազմի գիտական տեղեկատվության և վերլուծության բաժնի կողմից,

բ. գիտական գործունեության կազմակերպման վարչության պետին՝ Տեղեկանքը կազմելու աշխատանքները կազմակերպելու նպատակով: Տեղեկանքում նշվում է Ծրագրերի կատարման ընթացքում ձեռքբերված արդյունքների ու ֆինանսական միջոցների օգտագործման համապատասխանությունը Ծրագրերի հայտերով և առաջադրանք(ներ)ով նախատեսվածների հետ: Եթե մոնիթորինգի արդյունքում բացահայտվել են խնդիրներ, ապա դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունները նույնպես նշվում են տեղեկանքում: Տեղեկանքը կազմելու աշխատանքներն իրականացվում են Կոմիտեի աշխատակազմի գիտական կադրերի պլանավորման, որակավորման և հետազոտությունների աջակցության բաժնի կողմից.

11. Ծրագրերի մոնիթորինգի համար հավաքագրված տվյալներն ու դրանց վերլուծության արդյունքները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի աշխատակազմի՝

ա. գիտական քաղաքականության վարչության պետը կազմակերպում է մոնիթորինգի համար հավաքագրված տվյալներն ու դրանց վերլուծության արդյունքները Շտեմարանում մուտքագրելու աշխատանքները,

բ. գիտական գործունեության կազմակերպման վարչության պետը կազմակերպում է Տեղեկանքը կազմելու աշխատանքները և ներկայացնում է Տեղեկանքը Կոմիտեի աշխատակազմի ղեկավարին.

12. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը Տեղեկանքը ստանալուց հետո այն երկու աշխատանքային օրվա ընթացքում Ծրագրերի մոնիթորինգի համար հավաքագրված տվյալների և դրանց վերլուծության արդյունքների հետ միասին ներկայացնում է Կոմիտեի նախագահին:

13. Ծրագրերի մոնիթորինգի համար հավաքագրված տվյալները, դրանց վերլուծության արդյունքները և Տեղեկանքը ստանալուց հետո Կոմիտեի նախագահը երեք աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. դրանք ներկայացնում է Ծրագրերի ղեկավարներին, եթե մոնիթորինգի արդյունքում բացահայտվել են խնդիրներ,

բ. հանձնարարում է Կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը՝ իրականացնել Տեղեկանքը Շտեմարանում մուտքագրելու աշխատանքները.

14. Ծրագրերի ղեկավարները Կոմիտեի նախագահի համապատասխան գրությունը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի ցուցումների և առաջարկությունների վերաբերյալ ներկայացնում են հիմնավորումներ և պարզաբանումներ՝ կատարելով անհրաժեշտ փոփոխություններ Ծրագրերում:

15. Կոմիտեի նախագահը Ծրագրերի ղեկավարների համապատասխան գրությունները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարում է Կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը՝ իրականացնել Ծրագրերի ղեկավարների հիմնավորումները, պարզաբանումները, ինչպես նաև Ծրագրերի փոփոխությունները Շտեմարանում մուտքագրելու աշխատանքները.

16. Ծրագրերի մոնիթորինգի ամփոփ տվյալները գետեղվում են Կոմիտեի պաշտոնական կայքում՝ եռամսակային պարբերականությամբ: